ԴԱՐՁԵԱԼ ՑՕԳՆՈՒԹԻՒՆ ՍՈՎԵԼՈՑ.

Ամսագրոյս (Մարտ) Գրդ թուոյն մէջ հրատարակուած 2768 ռուբ. 8 կոպէկի հետ ի միասին հաշուելով՝ յօգնութիւն սովալուկ մերազնեայ եղբարց ցարդ հաւաքուած նուիրանաց գումարն հասած է 6387 ռբլ. 97 կոպէկի, որ հետ զհետէ կը խրկուի ի Պոլիս յանուն Գեր. Պատրիարք Դերսէս Ա. Էրքեպիսկոպոսին՝ սովելոց համար կազմուած Ազգային Գրոնոնեան Մասնաժողովոյն միջոցաւ կարօտ և տառապեալ ազգայնոց հասցնելոյ և մատակարարելոյ համար։

Յարդ հաւաքեալ նուէրներն հետևեալ տեղերէն են։

	Ռ.	Կ.
Ի ձեռն Թեմ. ատենի Հ. Ուշուոյ	303	
Կրկին ի ձեռն Թեմ. ատենի Աստրախանայ . . .	283	57
Ի ձեռն Թեմ. ատենի Տրիխեաց	1410	43
Ի ձեռն Թեմ. ատենին Հ. Համախուոյ *)	764	62
Կրկին ի ձեռն Հոգև. Կոմր. Ալեքսիսոյ	446	9
Ի ձեռն Հոգև. Կոմր. Գանձակու	141	73
Ի գործակալութենէ Կոտէից	33	33
,, Երագածոտան	16	50
,, Գառնուոյ	82	12
,, Թալինու	30	50
Ի ձեռն Խորէն Վարդապետի ի Հ. Ուշուոյ . . .	80	

(*) 596 ռուբլ. 92 կոպ. Բազուէն խրկուածն է։

Ի ձեռն Յակոբ քահանայի Թէօսունեանց Օրհէյցուոյ .	28	
Գումարն .	3619	89
Մարտի ամսագրոյն մէջ հրատարակեալն . . .	2768	8
Ի միասին	6387	97

ՍՈՒՐՀԱՆԴԱԿԱՐ ԲԻԻԶԱՆԴԵԱՆ.

ՀԱՑՈՑ ԱԶԳՆ ԵՒ ԵԿԵՂԵՑԻՆ.

(Անդրեալ Ռուսէն Մոսկուայէ)

«Վեցերորդ շրջանակի (Պոլսոյ) Թաղապետութեան այս հին նախագահն (Յարութիւն Պէյ Ցաւտեան) այսօր Հայոց Վարչութեան Ազգային Ժողովին նախագահութիւնը չվարեր կատարեալ անկողմնակալութեամբ և մեծ հեղինակութեամբ։

«Որչափ անուններ կան յիշելու. բայց մեք Հայոց Մեծ Եկեղեցւոյն վերաբերեալ անձինքը միայն կուզենք յիշել հոս թէև իրենցմէ բաժանեալ կրօնական հասարակութեանց մէջ ալ ըստուգիւ խիստ պատուական անձինք կը գտնուին։

«Մաքսուտեան պէյերն իրենց ազնուական առատաձեռնութեանց համար օրհնութիւն կը վայելեն։ Իրենց մայրն Օրթագեղի աղջկանց վարժարանին կազմաւորութեան ամենէն հզօր և փութաջան շարժառիթն եղած է։

«Նախնական կրթութեան վրայ շինած յատուկ գործերուն և աղջկանց կրթութեան համար գործադրած գերազանց մեթոտին համար 1873-ին Վիէննայի մէջ շքագրամ և վկայագրեր ստացող Մատամ Ֆիւրէն Օրթագեղի աղջկանց վարժարանին մէջ դնողն Տիկին Մաքսուտ պէյն է։

«Վսեմ. Գարաքէհեա Գէորգ Պէյ Վսեմ. Արրահամ փաշային հայրն, աղքատաց նախախնամութիւնը չէ՞, Եգիպտոսի փոխարքային այս մեծափարթամ սեղանաւորն իւր հարստութիւնը խիստ ազնուաբար չը՞ գործածեր։

«Ո՞ր կրնայ գտնուիլ Եգիպտոսի Բարձր. Խըտիվին Գաբու—քէհեասի Վսեմ. Արրահամ փաշայի պէս համակրելի անձ։

«Վսեմ. Աբրահամ փաշայի ազգատոհմին ամեն անդամները Վեհ. Սուլթանին և Բարձր. Խտիվին ծառայութիւն մատուցած են։

«Իւր պապը Սուլթան Մահմուտի պաշտպանեալն էր. հայրն ու հօրեղբայրը, Վսեմ. Գէորգ պէյ և Կարապետ պէյ՝ պատիւ ունեցած են իրենց տունն հուրընկալելու Սուլթան Ապտիւլ Մէճիտ և Վեհ. Սուլթան Ապտիւլ Ազիզ ինքնակալները։

«Վսեմ. Աբրահամ փաշայի եղբայրն երկար ժամանակ Բարձր. Խտիվին քարտուղարն եղած է, և քեռայրն՝ ամենահանճարեղ Նուպար փաշան՝ Եգիպտոսի դատաստանական բարեկարգութեան մեծ շարժառիթը, դեռ անցեալ տարի Բարձր. Խտիվին արտաքին գործոց Նախարարն էր։

«Վերջին ժամանակներս Վսեմ. Աբրահամ փաշան՝ մահկանացուի մը փափաքիլ կարելի եղած ամեն պատիւներով փառաւորեցաւ։ Մեք հասարակաց զգացմանց թարգման միայն կըլլանք ըսելով թէ՝ գոնէ այս անգամ բաղդը կուրութիւն չբերաւ, և չէր կրնար իւր շնորհներն առաւել արժանաւոր և առաւել ազնիւ կերպիւ գործածելու կարող մարդու մը պարգևել։

«Նորին Վսեմութիւնն անկեղծ բնաւորութեան, բարձր հանճարոյ և սիրալիր քաղաքավարութեան տէր անձ մ'է։

«Վեհ. Սուլթանին կայսերական համակրութիւնը վայելելով. վերջին երեք տարիներուն մէջ նշանաւոր ծառայութիւններ ըրաւ Բարձր. Խտիվին, նա ալ իւր ընդարձակ ազնուասրտութեամբ թագաւորապէս վարձատրեց։

«Աշխարհավարութենէ դուրս, Աբրահամ փաշան ամենահաղուագիւտ ձիրքեր ունի։

«Եթէ Սուլթան Ապտիւլ Ազիզ կայսրն Օգոստոս կայսեր հետ նմանողութեան կէտեր ունի, եթէ Կ. Պոլիս քաղաքը պալատներու և հասարակային մեծագործ շէնքերու քաղաք ընելու կը փափաքի, Աբրահամ փաշան ալ մեծ վեհապետի մը փափաքելիք ամենէն առատաձեռն և հանճարեղ Մեկենաս է։

«Գանք երկրորդ նշանաւոր անձին։ Ընթերցողն անշուշտ գուշակեց որ Վսեմ. Պալեան Սարգիս պէյի վրայ խօսիլ կուզենք։ Վեհ. Սուլթանին այս մեծ ճարտարապետն՝ իւր Վեհապետին հրամանաւ Մաշքայի փառաւոր և հոյակապ զինարանը շինելէ ետև, Բոսփորի ամենէն գեղեցիկ մէկ տեղուոյն վրայ Ապտիւլ Ազիզի մզկիթին հիմերը դրաւ, որ անշուշտ աշխարհի եօթն նոր հրաշակերտներէն մին պիտի ըլլայ։

«Ամեն մարդ գիտէ որ Պալեան ազգատոհմն Հայաստանի ամենէն հին և ականաւոր գերդաստաններէն մին է։

«Առանց ազգաբանութեան դասախօսութիւն ընելու հոս՝ պէտք է միայն յիշենք թէ Պալեանք գրեթէ երկու դարէ ի վեր, այն է 1683էն ի վեր, Կ. Պոլսոյ գահուն յաջորդող այլ և այլ Սուլթաններուն ճարտարապետն եղած են։

«Վսեմ. Սարգիս պէյ Պալեան ազնուականութեան այնպիսի խօսուն զինանշաններ ունի, որոց նմանն ոչ մէկ ազնուականութեան գրքի մը մէջ կրնայ գտնուիլ։

«Իւր ազգատոհմին պատմութիւնը փառաւոր շէնքերով կրնայ գրուիլ։

«1683ին իւր մեծ պապը՝ Պալի՝ Բարերդէն Կ. Պոլիս եկաւ, և Սուլթան Մէհէմէտ Դի շէնքերը նորոգող ճարտարապետին փեսայ եղաւ։

«Տասն և հինգ տարի ետքը, անոնք առանց արու զաւկի մեռնելով, Պալի յաջորդեց անոր պաշտօնին. անթիւ շէնքեր շինեց, մեծ հարստութիւն վաստկեցաւ, բազմաթիւ եկեղեցիներ շինեց իւր քսակէն, և 1729ին՝ այն է Մեծն Պետրոսի մեռած տարին՝ վախճանեցաւ, օրհնեալ անուն մը թողլով Հայոց ազգին մէջ։

«Պալիի որդին Մինաս, Մինասայ որդին Մակար, և Մակարայ որդին Գրիգոր, որ հոչակաւոր Քազազ Ցարութիւնը Սուլթան Մահմուտի ներկայացուց, անընդհատարար կայսերական ճարտարապետի պաշտօնը վարեցին։

«Մեծահատոր աշխարհացոյց պատկեր մը պէտք է Գրիգոր Գալֆայի ճարտարապետական գործերը նկարագրելու համար։ Զորս Վեհապետի ծառայելէ ետև՝ 1823ին մեռաւ, և այս ականաւոր ճարտարապետին՝ այս բարի մարդուն մահն՝ իրրև հասարակային կորուստ նկատուեցաւ Եւրոպական ազգերէն։

«Գրիգոր Գալֆայի շինածն են՝ Սարայ – Պուրնուի հրկիզեալ պալատը, Տոլմա – Պահչէի հին պալատը, Պէյլէրպէյլիի հին պալատը, Արնավուտքէոյի թագուհեաց պալատը, Տէֆթէրթար – Պուրնուի պալատը, Թօփհանէի մզկիթը, Սէլիմիէի զօրանոցը, Փոդերանոցը, Տավուտ փաշայի զօրանոցը, Սպարապետի Դրան աշտարակը, Այնալը-գավագի քէօշկը, Սուլթան Մահմուտի գեղեցիկ Պէնտը, և այլն և այլն։

«Որդին Կարապետ, որ Գրիգոր Գալֆայի յաջորդեց, երեք Սուլթանի ծառայելու պատիւ ունեցաւ. Սուլթան Մահմուտի, Սուլթան Ապտիւլ-Մէճիտի և Սուլթան Ապտիւլ-Ազիզի։

«Կրնայ ըսուիլ թէ արդի ճարտարապետութեան արուեստն Օսմանեան կայսրութեան մէջ ծաղկեցընողներուն գլխաւորներէն մին եղաւ Կարապետ։

«Անոր կառուցած նշանաւոր շէնքերը մի առ մի չենք թուեր, որովհետև աչուընուս առջև կեցած են. այլ Հայոց ազգին երախտագիտութեան վրայ ունեցած իրաւանց գլխաւորներէն մի քանին կը յիշենք։

«Պէշիքթաշի եկեղեցին շինեց իւր ծախքովի և անոր եկամուտ կապեց իւր Իւսկիւտարի այգիներն և Իճատիէի ընդարձակ հողն, որոյ վրայ շէնքեր շինելու համար կայսերական հրովարտակ ստացաւ։

«Եէտի Գուլէի Հայոց Հիւանդանոցին ալ ընդարձակ և բարեբեր հող մը նուիրեց։

«Երուսաղէմայ Հայոց Ս. Յակոբայ վանքին ընդարձակ ագարակներ նուիրեց Եալովայի մօտ, և այլն և այլն։

«Իւր կենդանութեան ժամանակ օժանդակ առած էր իրեն իւր երկու որդիքը, Նիկողոս և Սարգիս պէյ, որոց երկուքն ալ Եւրոպիոյ մէջ լաւ ուսմունք առած էին, և Վեհ. Սուլթանին ճարտարապետի տիտղոսով պատուեցան։

«Նիկողոս Գալֆա ծաղիկ հասակին մէջ մեռնելով, Սարգիս պէյ միայնակ իւր հանճարեղ և անձնուէր աջակցութիւնը նուիրեց իւր հօրը։

«1866ին Կարապետ Գալֆա արդարոց մահուամբ վախճանեցաւ՝ իւր երկրին օգտակար մարդ եղած ըլլալու քաղցր գիտակցութեամբ. և Սուլթան Ապտիւլ Ազիզ ինքնակալն որ հօրն առաքինութիւններն և որդւոյն տաղանդն արժանապէս գնահատելով, Վսեմ Սարգիս պէյն իւր կայսերական շինուածոց և պալատանց ճարտարապետ անուանեց։

«Դեռ երիտասարդ և գրեթէ ծաղիկ հասակի մէջ, Վսեմ. Սարգիս պէյ արդէն այնպիսի շէնքեր շինած է, որք բաւական են դպրոցի մը կամ ամբողջ գերդաստանի մը փառք ըլլալու։

«Իրրև մասնաւոր անհատ, Սարգիս պէյ բարեսիրտ, առատաձեռն, ազնիւ և մարդասէր է։ Այս միջոցիս վեց հազարէն աւելի մարդ կաշխատցընէ ամեն օր, և երբէք իւր վեհանձնութեան դիմաց դժբաղդ մը ձեռնունայն ետ չէ դարձած։ Իւր գործերն յատուկ յօդուածի մը նիւթ պիտի ըլլան։

«Արուեստից պաշտպան և արուեստաւորաց քաջալերող է։

«Վերջապէս Պարոններուն այս արժանաժառանգ յաջորդն է, որ պատիւ ունեցաւ Այվազովսքի Մեծ Նկարիչը Վեհ. Սուլթանին ներկայացնելու։

«Եւ հիմա թէ որ տխրազգած միտքեր այնպէս դատին՝ թէ քանի մը մեծ անձնաւորութեանց վերայ քիչ երկար խօսեցանք կը պատասխանենք անոնց թէ՝ մարդիկ կան՝ որք իրենց Ազգին փառք են, և թէ գրչի մը պարտքն է զանոնք օրինակ ցուցնել այլոց»։

Մասիս, թ. 1653–4։

ԱԶԳԱՑԻՆ ԺՈՂՈՎ.

Երէկ (Մայիսի 2) ազգային ժողովը Ղալաթիա գումարուելով՝ Ամեն. Ս. Պատրիարք Հայրն իմաստալից ատենախօսութեամբ մը ժողովին սահմանադրական նոր շրջանը բացաւ։

Ն. Սրբազնութիւնը նախորդ շրջանին մէջ կատարուած գործողութեանց վրայ համառօտ ակնարկ մը ձգելով՝ և քանի մ՝ ամենակարևոր խնդրոց յաջող լուծում մ՝ ստացած ըլլալը մէջ բերելով՝ շնորհակալութիւն յայտնեց իրեն աջակից վարչական ժողովներէն, և յառաջիկայ շրջանին մէջ ալ ազգային դաստիարակութեան և սահման-